Սիպիլ

Արտույտին

Մարգարտաշող մըշուշն հագիվ փարատած
Ծաղիկներուն թարմ լանջքերեն գունավառ,
Արևելքեն կը հեղեղե բոց ու կայծ,
Ծիածանի անձրև կ՚իջնե լեռն ի վար,

Անդորրությունն է դեռ անեղծ գիշերվան,
Դեռ խզված չէ մեծ լռությունը ցայգուն,
Առէջքները լուռ անուրջ մը կը հևան.
Բույնն է քաշված արդեն չղջիկը անքուն:

Ու կ՚արթաննաս ճաճանչներումեջ, արտո՛ւյտ,
Անդրաշխարհի երազներեդ արփավետ,
Ջոր կը բերեմ սրփռել օդին մեջ կապույտ՝
Քու խանդավառ, սիրասարսուռ երգին հետ:

Լույսն հոգին է, և դուն հոգին ես լույսին,
Առանց քեզի եթերն համայն կ՚ըլլա լուռ.
Թռչունները անտառին մեջ կը խոսին,
Մինչ երկինքն երգիչն ես դուն քաղցրալուր:

Ու կը թռռիս, բացած թևերդ անհունին,
Դեպի վերին բարձրություններն անմատույց.
Քոզի համար ոլորտները թումբ չունին,

Եվ մառախուղն ու ամպերն են անհագույց:

Հրճվանքն ես դուն սրտին հույսով բաբախում,
Տենչանքներով արբշիռ հոգին սրլացիկ,

Որ լույսին մեջ կը թևածես օրն ի բուն
Միշտ անհատնում հեշտանքով մը երջանիկ:

Ի՜նչ ըզգլխիչ, վրսեմ տեսիլք մը անհուն,
Կը թովեն քեզ անդունդներեն անծանոթ.
Ի՜նչ հուզումներ արդյոք հոգիդ ըզգայուն
Կը լեցընեն այդ երգերով եռանդոտ...

Սրլացի՛ր միշտ, մեր երկրեն վեր բարձրացիր
Գեղեցկության ու սրբության հետազոտ.
Ազնիվ սիրտեր երբեք քեզ չեն նախանձիր.
Քու կյանքդ լայն հորիզոնի է կարոտ:

Գուցե այդ խուլ վազքեդ հոգնած, անխրլիրտ՝
Կամ ամպերու սառ ըստվերեն հալածված
Օր մը իյնաս, ավա՜ղ, հողին վրրա բիրտ,
Թևատ, տրխուր և հիասթափ գետնամած:

Եվ սողուններն ու միջատներն երկրաքարշ
Մոտենալով անզոր մարմնույդ ուժասպառ
Ծաղրեն խոյանքդ որ մնացած է անշարժ,
Եվ խրրոխտ երգդ հատած, մարած, հոգեվար:

Ի՜նչ փույթ. դուն միշտ երկինքին մեջ ապրեցար,
Խանդոտ հոգվույդ սուրբ կոչումին նվիրված:
Մահն օրենք է, և երանի՜ քեզ հազար
Եթե կ՚ըլլաս զոհ քու սիրույդ հաղթապանծ:

1911

Յատուկ Պոեմ